ՀՈՎՈՒԱԿԱՆԱՑՆ

ՊՈՐԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՑ ՄԱՐՈՎՆԻ

ԾԱՂԿԱՔԱՂ ՎԵՑԵՐՈՐԴ

ՍԻԼԵՆՈՍ

Սիլենոս զսկիզբն համազոյից խառն ընդ առասպելս պատմէ պատանեացն Քրոմեայ և Մնասիլեայ ըստ եպիկուրեան աղանդոյն վարդապետութեան։ Սիլենոս ասա զՍիրոնի եպիկուրեան իմաստասիրի բերէ զդէմս, իսկ Քրոմիս և Մնասիլ զՎիրգիլեայ և զՎարոսի աշակերտելոց Սիրոնի ի վարժս իմաստասիրականին այնորիկ աղանդոյ։ Եւ է Վարոսս այս ըստ հաւանականագոյն կարծեաց Կուինտիլիոսն Վարոս, որ ի բարձր աւագութիւնս առ ինքնակալութեամբն Աւգոստեայ ամբարձաւ. և երիւք լեգէոնօք ի Գերմանիա արձակեալ, ի կորուսանելն զնոսա դաւով Արմինիոսի՝ առ վշտին չոքաւ զիւրովին։

Սիրակուսեան տաղից ի խաղ նախ ինքըն մերըս Թալիա
Ոչ դրժպատեհ վարկաւ զբօսնուլ, եւ ոչ ամօթ քնակել յանտառս։
Օրքայից եւ զՃակատուց մարտի մինչ երգս յօրինէի,
Ինթեանն ինձ Պոլոն՝ ձրգելով զունկն իմ՝ ազդ արար.
Հովուի զպարարակ խաշինս արժան է արածել,
Հովուի բարակաման ոլորել տաղս ով Տիտիրե։
Ընդեղջայինն արդ ըզՈուսա յեղյեղեցից ես նուրբ ի ծղօտ.
Օր ի իցեն իսկ յոլովք՝ որ զդրբուատիս քո, ով Վարե,
Հրաչակել ցանկանայցեն եւ զգուս ի յերգ առնուլ դրժնեայս։
10 Ոչ անհրամանս ինչ նրւագեմ. բայց թէ երբէք ոք ի սոսին
Դթէ իցէ ոք որ սոցին հարեալ սիրով ակնարկիցէ,
Ընդքեզ մոշիք մեր նրմա ըզքեզ անտառք առ հասարակ
Ներուագեսցեն, ով Վարե. չիք ինչ Փեբեայ հաճոյագոյն
Քան որ յինքն ըզՎարեայ վերբերէ էջ դրոշմեալ զանուն։
Զ՝ն ապա Պիերեանք։ Ընկեալ ըզքնով ի քարայրի
Քրոմիս եւ Մնասիլ տեսին մանկունք ըզՍիլենոս,
Դրեկոյեան քաղցուով երակք իւր որպէս միշտն ուռուցիկք.
Բայց միայն սահեալ պրսակք ի Ճակատուէն կային ի բաց,
Եւ ծանրակիրն ըմպանակ ի կախ ըզմաշ կայր զունկանէն։
20 Յարձակին, եւ զնա նովին պրսակօք շուրջ պարաւանդեն.
Օր ի յաճախ ի յոյս տաղից պատրեալ ծերոյն էր զերկոսեան։
Պումարեալ ընդ նոսին վեհերոտիցն ի զօրաւիգն
Հաս Եգլէ. Եգլէ ի պարս յաւերժհարանց ջրքնաղագեղ.
Եւ յաչացն ի բանալ՝ Եգլէ ի թուրթ արիներանգ
Ընքունըս նորին եւ ըզՃակատն երգունեաց։

Նորա ընդ նենգն ժրպտեալ՝ ասէ. ընդէր կաշկանդէք զիս,
Լուծէք, ով մանկունք, շատ տեսանելոդ զիս լիցի։
Տաղս յինէն պահանջէք, ընկալարուք. տաղք ահա ձեզ,
Մայլ ինչ սրմա տացի վարձ։ Եւ սկիզբն անդէն արար երգոյն.
30 Պայք եւ պարիկք անդ եւ գազանք ի ներդաշնակ խաղային պար,
Եւ կաղնիք ըզգագաթունսըն կարծրապինդք տատանէին։
Ոչ այնպէս բերկրին Փեբեաւ սարք պարնասեան, եւ ոչ Խմար
Մինպիսի եւ Հոռոդոպէ ընդ Որփէոս կայ հիացեալ։
Վանզի նուագէր ինքը ընդ անհունն ունայն ի մի հասեալ վայր
Երկրի սերմանք եւ այսոյ, ծովու համայն եւ լոյծ հրոյ,
Եւ ինքը ի տարերց աստի նախէք առ հասարակ,
Եւ ինքն իսկ նորաստեղծ ոլորտ երկրի շարակայեալ։
Ընդ գետին տրամանալ եւ ի յանդունդս ըզԵրէոս
Մինոյր վանել, տակաւ ի յարդ ածեալ էից ու ի կերպարան.
40 Ինքը ապա ընդ արփին նորանըշոյլ պակեաւ երկիր,
Եւ տարափք ի բարձրաբերձ ամպոց յուզեալ անկանէին.
Ընդ ըսկիզբն անտառաց առեալ յառնել, եւ երէոց
Համասփիւռ ընդ անծանօթ լերինս թափ առեալ շրջել։
Յայնժամ զարկեալ վէմն ի Պիրրայ եւ ըզկրոփնեանն արքայութիւն,
Ըզգողոնսըն Պրոմեթեայ եւ զկովկասեան վիպէ ըզհաւս։
Յաւելու եւ առ որով աղբերք նաւորդք ըզկորըստեայն
Զայնեալ Հիլաս, եւ ինքը ողջոյն հընչէր ծովափն Հիլա՛ս Հիլա՛ս։
Զիւնափայլ երընջոյն զհարեալն ի սեր Պասիփայէ
Ապա սիրէ, զերջանիկն՝ եթէ երբէք չէր լեալ նախիր.
50 Ինքը, աւա՜ղ, հէք օրիորդ, ի շամբշուքիւնդ յայդ մատնեցար.
Ընցին Պրետեայ դրստերք ըզդաշտս ի կեղծ ի կեղծ ի բառաչ,
Մայլ ոչ ի ժանտ ուրուք ի խառնըս պաճարին մընտաբերեալ,
Լեպէտ եւ զլուծ արօրաձիգ յուլանն ըստէպ կասկածելով,
Եւ զեղջերս յողորկատարք ի ճակատուն հետազօտէր։
Աւա՜ղ, հէք օրիորդ, դու ի լերինս արդ թափառիս.
Ա՛ա ի քընքուշ յակինթ զիրանըն ձիւնաթոյր ընկողմանեալ,
Ըսեմաստուեր ընդ սըղոցեաւ ըզդեղնաշորթ սէզն որոճայ.
Կամ ի նախրի անդ ի մեծի մատակախանձ հետամըտէ։
Փակեցէք յաւերժհարսունք ըզտընկախիտս անտառաց,
60 Մրափակս արարէք յաւերժհարսունք դիկտեուհիք,
Օ՛ի հետք ցըլուն թերեւս ի յաչըս մեր անկցին թափառականք,
Օ՛ի մի գուցէ զհետ անդէոյ եւ կամ ի գոմըս գորտինեանս
Կանաչագեղ դալարոյն արկցեն ի սեր ըզնա արջառք։
Յերեկորնեայսն ի խընձորս ապա զաղջիկն երգէ յառեալ.
Դառնակեղեւ մամռապատ զփայետոնիկս ապա զդրստերս
Մբառնայ ի յերկրէ եւ բարձրաբերձ կանգնէ բարտիս։
Յայնժամ երգէ ըզԴալլոս, ինքը յաւոնեան ած ի լերինս

Մ՚ին ի քերց ըզթափառեալն առ գետեզերբըն Պերմեսեայ,
Եւ իբր յոտին նըմա յարեաւ եկաց փեբեան պարն համբրէն.
70 Ի՛բր հովիւըն Լինոս ի դիւցական նըմա ի տաղ,
Ծաղկունս ըզվարսիւքն եւ կրծուահամ ածեալ նեխուր,
Ասէր. Օ՚այսոսիկ քեզ եղեգունըս տան Մուսայք,
Ա՚ռ ընկալ, զորս ասկրեցւոյ տրւեալ էր վաղ ծերունւոյն.
Որովք նայն ի նուագելն իւրում սովոր էր ի լերանց
Վայրաբերել ի հրաւէր ըզկարծրատորըր քարհացիս.
Սոքիսք ըզգրինեան առ զանտառին դու սկիզբն ի յերգ,
Օ՚ի մի ուրեք գերապանծ փեբեայ քան զայն կացցէ դաբիր։
Օ՚ինչ ըզնիսեանն Ասկիլլայ առից ոգել, զորմէ զրոյցք
Ի հրէշ ընդվայրահաջ փայլուն բարձիւքըն կերպաւոր
80 Համբաւեն ըզլաստափայտսըն դուլիքեանս ալեկոծեալ,
Եւ ի խորս անդընդոց զերկչոտն, աւա՜ղ, ըզնաւաստին
Յօշյօշ կեղեքեալ ի ժանիս շանցըն ծովայնոց.
Կամ զիարդ զայլակերպիկըն Տերէի վիպեալ իրան,
Որ ինչ խորտիկ Ջամբեալ նըմին Փիլոմելայ որ ինչ եւ նուէրս.
Ի՛բր արագ սլացեալ յանշէն, եւ որպիսի նա Թեւս առեալ՝
Հէքն ըզյարկօք ըզվաղ ուրեմըն իւրայնովք հոլաթեւէր։
Եւ բնաւ որ ինչ փեբեայ երբեմն յեղյեղելով լուաւ Եւրոտ,
Եւ հրաման սարդենեաց ետ ուսանել, երգէր Սիլեն։
Հովիտք ըզնոյն երգակիցք յաստեղս ի վեր ածեն գեղգեղ,
90 Մինչեւ գիշերավարն ընդ դրժկամակն Ալիմպ Ջեմեալ,
Ի գոմ ըզխաշն հարկեցոյց ածել՝ արկեալ զայն ի համար։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Թարգմ մի յինուանց Մուսայիցն, վերակացու կատակերգութեան և թատերախաղից. և են իմաստք տողս. Նախկին 'ի լատինաց ոչ գժպատեհ վարկայ գրել տողս հովուականս ըստ օրինակի սիրակուսեցւոյն Թէոկրիտեայ։
3. Ասի սկսեալ նախ Վիրգիլեայ երգել զթագաւորս ալբայեցիս, և ապա թողեալ զայն և ձեռնարկեալ 'ի տաղս հովուականս։
4. Կինինեան կոչին Ապոլոն և Արտեմիս, երկոքին ևս ծնեալ 'ի Դեղոս կղզւոջ՝ ուր է լեառն Կինթոս։ Իսկ ձգել զունկն վասն յուշի կապելոյ զնրատն է։ Առասնօր Վիրգիլ Տիտիրոս զանձն անուանէ։
8. Վարոս այս այլ և այլ ոք կարծի 'ի մեկնչաց, այլ հաւանագոյն թուի լեալ Պ. Կուինտիլիոս Վարոս, մեծամեծ աւագութեանց յաւուրս Աւգոստեայ ինքնակալի հասեալ. քանզի նախ ըդեաչխ 'ի Հռոմ եկաց, ապա կուսակալ յԱսորիս, և ապա երիւք լեգէոնաց 'ի Գերմանիա դիմեալ, և յԱրմինեայ զօրավարէ դաւով պաշարեալ՝ ահագին կոտորածիւ կորոյս զզօրսն, մինչև առ յուսահատութեան երթալ զիւրովին։
10. Իմաստք տողիցս են. թէպէտ և երկեցոյց զնս Ապոլոն նկարագրել յերգս դիւցազնականս զքո արութիւնս, սակայն և զհովուականս իմ զայսոսիկ տաղս եթէ ոք ընթեռնուցու, գտցէ ամենայն ուրեք յանտառս մեր և յանդեայս զանուն քոյին. զոր յաճախեմ յիշատակել, գիտելով զի չիք Ապոլոնի հաճոյագոյն ինչ քան զքերթուածս՝ որ զանուն քո բերիցեն։ Այնպէս և 'ի ծաղկաքաղն Թ. ստէպ յիշատակէ զնոյն ինքն զՎարոս։
15. Պինդարոս. տես 'ի Ծաղկ. Գ, 87։
16. Քրոմ և Մնասիլ մարգապպաք պատանիք. իսկ զՍիլենեայ տես 'ի Ծաղկ. Ե. 73։
23. Եգիպտ մի 'ի յաւերժհարսանցն Նայատից, դուստր Նէերայ և արեգական։
24. Քանզի թթենիք սպիտակս միշտ յառաջագոյն ըստ առասպելաց պտղաբերէին, և ապա յարենէ Պիրամեայ և Թիսբեայ եղեն թութք բոսորատիպք։ Ովիդ. այլակերպ. Դ. 54։
32. Պարոնս լեառն 'ի Փռվկիս, մերձ 'ի Կիթերոն և յԵլիկոն. կրկնակ գագաթամբք սարաւանդեալ, յորոց մին կոչի Նիսա՝ նուիրեալ Դիոնիսի, և միւսն Կիրրա՝ որբազանեալ Ապոլոնի և Մուսայից։

33 · Հ-դ-դ-ղ-ե լեառն 'ի Թրակիա, միշտ ձիւնախառաղ, որ ձգի 'ի ծովակողմն կոյս յեւքսինեանն Պոնտոս, և անտի բղխէ Եբրոս գետ։ Իսկ Խմբ միւս այլ լեառն 'ի ծովեզերեայ գաւառ Թրակիոյ, ոչ ինչ հեռի 'ի բերանոյ Եբրոսի։ Յայսոսիկ կողմանս յածեալ ջրջէր Որփէոս։

34 · Եպիկուրոս երկուս սկզբունս համագոյից դնէր, զդատարկութիւն և զլիութիւն. զի որ ինչ էն՝ կամ բովանդակի և է լիութիւն, և կամ բովանդակէ և է դատարկութիւն։ Դատարկութիւն կոչէր զվայրն համատարած ունայն 'ի նիւթոց. և լիութիւն զհիւլեայս կամ զնիւթն մանրամաղ, որ ընդ համօրէն զվայրն զայն դատարկ. զորս Վիրգիլիոս սերմանս կոչէ ասա, յորոց ընդ իրեարս պատահելոյ գոյացան ըստ նմին աղանդոյ չորեքին տարերքն՝ հուր, ջուր, երկիր, և օդք՝ զոր այս անուանէ. և ապա 'ի բաղադրութենէ տարերցս եղէն երկինք, արեգակն, կենդանիք. և այլն ամենայն։

38 · Ն-ր-ե-ս որդի Ովկիանու և Տեթեայ, հայր յաւերժահարսանցն Ներեայց. ասա առեալ է փոխանակ ծովու կամ ջուրց։

44 · Պիրրա կին Դեւկալիոնի արքային Թեսաղացւոց, առ որով ջրհեղեղն՝ ուստի երկոքին ևեթ սոքա ապրեցան, անկեալ նաւու 'ի Պարնաս՝ որ միայն 'ի լերանց չէր ծածկեալ 'ի ջուրց։ Իսկ 'ի գագաթել ջրհեղեղն հարցին զքուրմն Թեմեայ մոր Ատրէայ դիցուհւոյն վասն սերելոյ անդրէն ազգի մարդկան. և նա ետ պատգամ, ընկենուլ յետս կոյս զոսկերս մայրենիս։ Խելամուտ եղև Դեւկալիոն խմբասից բանին՝ զի ոսկերս մայրենիս կոչէր զքարինս երկրի մօրն հասարակաց. և 'ի կատարել նոցա զպատուէր քրմին, քարինք 'ի նմանէ ընկեցեալք՝ փոխեցան յարս, իսկ որ 'ի կնոջէն ընկեցեալք՝ փոխեցան 'ի կանայս։

Զկրոնքեան արքայութենէ տես 'ի ծաղկ. Դ. 6։

45 · Պրոմեթէոս մի 'ի Տիտանանց, հայր Դեւկալիոնի, որ անդրիս 'ի կաւոյ ստեղծ, և հուր յերկնից գողացեալ՝ կենդանացոյց նովաւ զանդրիսն։ Ընդ որ ցասուցեալ Դիոսի, ետ Հեփեստեայ կապել զնա 'ի Կովկաս լերին, և անգեղ զլեարդ նորա ճարակել. և լերդոյն հանապազօր աճելով, մշտնջենաւոր կրել նմա զտանջանսն։

Կովկաս լեառն Ասիոյ, ընդ մէջ եւքսինեան և կասպեան ծովուց։

47 · Հիլա մանուկ սիրելի Հերակլեայ և ուղեկից նորա յարշաւանին ընդ Արգոնաւորդս. սա իջեալ 'ի նաւէն երթալ զջրոյ, և խոնարհեալ յաղբիւրն, 'ի ծանրութենէ սափորոյն անկաւ յալիս անդ խորասոյզ, և յափշտակեցաւ 'ի յաւերժահարսանց՝ որպէս առասպելեն։ Զոր ընդունայն ապա կոչէին յանուանէ Հերակլէս և Արգոնաւորդք. վասն որոյ սահմանեցան 'ի սեղանոջ անդ տօնք, յորում այսր անդր ընթացիք ստէպ կոչէին զՀիլաս մանուկ։ Զաղբիւրս զայս և զլիճ համանուն մանկանն Հիլասայ՝ համարի Սոլինոս 'ի Բիւթանիա 'ի քաղաքն Պրուսա։

48 · Պ-ի-ի-ոյ-է գուսար արեգական, կին Մինովայ արքային Կրետացւոց՝. որ հարեալ 'ի սէր ցլու՝ ծնաւ 'ի նմանէ ըստ առասպելաց զՄինոտաւրոս մարդ ցլախառն։

51 · Դստերք Պրետեայ արքային արգիւացւոց հաւասարել գեղոյն Հերայ ամբարհաւաճեալ, հարան 'ի նմանէ 'ի գազանային կատաղութիւն՝ արջառս զանձինս կարծելով, վասն որոյ կեղծիկեղծ զբառաչ նոցա կոչէ քերթողն. զի ոչ իսկապէս արջառք էին, այլ անոտի երկիւղիւ պատրեալ՝ ստէպ 'ի ճակատուն իւրեանց եղջերս հետազօտէին, և զլուծ յուլան։

57 · Դեվ-ալ-ի կոչէ զիսոն որոճացեալ, քանզի բնաւորապէս կորուսանէ զդալարագեղ կանաչութիւնն 'ի վերբերելն անդրէն յետ կլանելոյ և 'ի կրկին ծամելն։

59 · Պասիփայեայ է բանս, զոր Սիլենոս 'ի դիմաց Նորա առ յաւերժահարսունս բարբառի. և կամ յանձնէ իսկ առ 'ի սփոփումն Նորին։ Փակել զանտառս իմս պատել զայն ցանցիւք։

60 · Դիկ-է լեառն է 'ի Կրետէ, ուր 'ի յայրի ուրեք գնտակք մեղուաց սնուցին զԴիոս 'ի մանկութեան։

62 · Գ-ր-գ-ն-ա աւան 'ի Կրետէ, պարարտ արօտիւք։

64 · Ակնարկէ յԱտալանտա գուսար Աքենէոսի արքային Սկիւրայ կղզւոյ յեգեան ծովու, որ զտարփաւորս իւր կարգայր յասպարէզ ընթացից. զպարտեալս 'ի մահ մատնել, և ամուսնանալ ընդ յաղթողին։ Յաղթեաց նմա Իպպոմենէս արկեալ ընդ առապարէզն խնձորս ոսկի, և յամեցուցեալ զօրիորդն 'ի ժողովել զայնոսիկ։ ՅԱտալանտէ զխնձորսն զայնոսիկ ընկալեալ էր Իպպոմենեայ, յերեկոյնեան պարտիզացն քաղեալ. զոր դարմանէին Եսպերեայք գստերք երեք Եսպերոսի եղբօր Աղասայ 'ի Լիբիոս աւան Մաւրիտանիոյ. ուր 'ի պահ կայր վիշապ բազմագլխի ահագին, զոր սպան Հերակլէս առ 'ի բերել 'ի պտղոց անտի առ Եւրիսթէոս արքայն Միկենայ։

65 · Փայէթոնիս քորք Փայեթոնի, գստերք արեգական. որք առ վշտի կործանման եղբօրն իւրեանց հայրենի կառաքն յԵրիդանոս, այլակերպեալ փոխեցան 'ի բարսիս։

67 · Պոբլիոս Կուռնելիոս Գալլոս, հայրենեաք 'ի Փորոյսալեայ, 'ի նուաստ բախտէ ամբարձեալ 'ի շնորհս և 'ի մեծութիւն Ոկտաւիանոսի ինքնակալի, և բարերարեալ 'ի նմանէ, սակայն ապերախտ առ նա գտաւ։ Վասն որոյ մերժեալ 'ի նմանէ, և վշտով ծերակուտին դատապարտեալ 'ի տոյժս և յաքսոր՝ չդաւ զլուրովին. բայց ինքնակալն ելից զմահ նորա։ Սիրելի եղև նա բազմաց, մանաւանդ Պոլլիոնի և Վիրգիլեայ. ասի իսկ Վիրգիլեայ 'ի չորրորդ գիրս մշակականացն զգովութիւնս նորա յեռեալ, և ապա 'ի հրամանէ Աւգոստեայ բարձեալ զայն յետ մահուն Գալլոսի, և զհրաշազան գրուագ Արիստէոսի վիպացն ճահագոյն 'ի տեղի փոխանակեալ։ Արդ էր սա ինքն Գալլոս և քաջ բանաստեղծ, և արար և թարգմանեաց քերթուածս, որ ոչ հասին առ մեզ։ Ի սոյն ակնարկեն յաջորդ տողքդ։ Ա-ն-ն-ա լերինք են Եղիկոն և Կիթերոն 'ի Բիւոտիա, որ յառաջն կոչէր Աւոնիա յԱւոնեայ որդւոյ Պիսիդոնի՝ որ 'ի կողմանս յայնոսիկ թագաւորեաց։

Պերմ-ս գետ անդ 'ի Բիւոտիա, որ բղխէ յԵղիկոնէ։

Սին 'ի քերց, այսինքն յինեանցունց Մուսայից գստերաց Փեբեայ, որոց պար համարէն յառնէ յոտին կայ 'ի պատիւ Գալլեայ։

70. Զ. Լինոսէ տես 'ի Ծաղկ. Դ. 57։

71. Նէիոս՝ ազգ բանջարոյ, որով նախնիք պսակէին զգուպարայաղթ նահատակս Խթմեան և Նեմեան խաղուց։

73. Աոլրեցոյ ծերունոյն, այսինքն Եսիոդեայ՝ որ յԱսկրայ գեղջէ Բիոտիոյ, որ յաջմէ կայ Եղիկոնի։

76. Գրիգոր աւան յԵւոդիս, ուր էր մեհեան Ապոլոնի 'ի սպիտակ կղզի, պատգամատեղի հռչակաւոր. զոմանս 'ի պատգամաց անտի ասի Թարգմանեալ Գալլոսի 'ի լատին տաղս 'ի քերթուածոց Եւփորիոնի ուրուսն քերթողի քաղկիսացւոյ։ Ցորս էր Թերևս և նկարագիր սկզբան գրինեան պատգամատեղւոյն։

78. Կրկին են Սիբիլայք, մին Նիսեայ մեգարացւոց արքայի դուստր, որ մահուանէ հատամամբ հերաց հօրն մատնեաց զնա Թշնամւոյ նորին Մինովայ՝ որոյ սիրոյն վառեալ էր, և պատուհասեալ փոխեցաւ յարտոյտ։ Իսկ միւսն Սկիլլա էր դուստր Փորկոսի, որ քանզի սիրեալի էր Գլաւկեայ՝ մախանաք Կիրկէի փոխեցաւ 'ի միջոյ 'ի վայր 'ի կերպ շան. և յարհաւրաց տգեղութեանն ծովամոյն եղեալ, փոխեցաւ 'ի Ժայռ՝ ոչ ինչ հեռի 'ի յորձանացն Քարիբդեայ, ուր ահագին մրրկաւ ալիկոծեցան նաւք Ոդիսեայ արքային Իթակայ և Դուլիքիոնի կղզեաց յոնիական ծովուն։ Հոմերոս յաւելու զնովաւ և շունս մարդակուլս։ Ասա Վիրգիլ զերկոսին առասպելն ընդ իրեարս խառնէ, զփորկեանն Սկիլլայ զիրս միւսումն յարելով. վասն որոյ ոմանք այլազգ կամեցան ընթեռնուլ զայս տող ըստ դրչագրաց ոմանց, բայց և Ովիդիոս և Պրոպերտիոս հանգոյն Վիրգիլեայ զերկոսին Սկիլլայս ընդ իրեարս յեռուն։

83. Փիլոմելա և Պրոգնէ էին դստերք Պանդիոնի արքային աթենացւոց. Տերէոս արքայ Թրակիոյ ածեալ զՊրոգնէ 'ի կնութիւն, ծնաւ 'ի նմանէ ուստր զԻտիս. և ապա մծղնէաբար անօրինեալ ընդ Փիլոմելայ, եհատ զլեզու նորա՝ զի մի զոճիրն կարասցէ պատմել։ Այլ նորա գրով յայտնեալ զայն քեռն իւրոյ, և միաբանեալ զնա ընդ իւր, սպան զԻտիս և մատոյց զնա Տերէոսի հօր նորա 'ի կերակուր։ Եւ ապա իբրև զգլուխն ևս որդւոյ նորա ած 'ի մէջ, Տերէոսի զայրագին ձգեալ սուսեր 'ի վրէժինդրութիւն՝ փոխեցաւ ինքն 'ի յոպոպ, Փիլոմել 'ի սոխակ, Պրոգնէ 'ի ծիծառն, և Իտիս 'ի փասիան։

87. Այսինքն որ ինչ Եւրոտաս գետ լուաւն 'ի Փերեայ, յորժամ սա զգեստեղերքն Թափառական չքէր առ սեր Ցակինթեայ, զայն ամենայն երգէր Սիլէն։ Եւրոպաս գետ 'ի Լակոնիա, բղխեալ յԱրկադիոյ, և 'ի անկախիտ սարդենեաց հովանացեալ։

90. Մոլորակն Ատղիկ երևեալ ընդ այգն՝ կոչի արուսեակ կամ լուսաբեր, իսկ ընդ երեկս գիշերավար։ Համարեր սա միաձի կառավարել, ուր արեգակն քառաձի, և լուսին երկձի. բայց ընդ այգն սպիտակ երիվարաւ, իսկ ընդ երեկս թխաձի։

Ընդ Գիլամոն Ուիմպ. քանզի քաղցրութեամբ երգոցն զմայլեալ Ուիմպ կամ երկին, գժկամակեր ընդ գալ գիշերոյ՝ որ լռեցուցանէրն զերգս։

ՄԻՋԻՆ ԴԱՐ [1]

Գերմանացի Մինեսինկէրաց երգերը։

Բ

Վալդեր ֆօն Ֆօկելվայտ քերթողն հին Մինեսինկէրաց մէջ ամենէն ուսելի անուանին է։ Ծնած էր ԺԲ դարուն վերջերը՝ որդի Թուրկովիացի ազնուական ազգատոհմի մը. Եւրոպա և Ասիա շատ ճանապարհորդութիւն ընելով, և հռչակաւոր համալսարանաց մէջ, ինչպէս նաև Բարիզ, Կոստանդնուպոլիս ու Պաղտատ երկար ատեն կենալով, այնպիսի դիտողութեամբք ու այնչափ տեղեկութիւններով ճոխացուց իր միտքն, որ այն ատենուան համար մեծ բան էր։ Եւրոպայ բանաստեղծական խանդը կը յափշտակէր զինքը, իր բեղնաւոր ու աշխոյժ հանճարովն՝ աւարառած ճոխութիւնները իր քնարին թելերուն կը յարմարցնէր։ Փառասիրութեան խայթ մը չզգալով ներսէն իր անունն ապագայ դարուց մէջ յիշել տալու ընդարձակ դիւցազնական քերթուածի մը հեղինակութեամբ, ինչպէս որ շատերը կը յօրինէին իր ժամանակը, բաւական սեպեց իր մտածութիւններն ու հանապազօրեայ զգացմունքներն երգելու ներդաշնակ ու ազնուական սրտի վայել տողերով, որոնց մէջ երբեմն վարպետ իմաստներ ալ կը ցոլային. որովհետև ոչ միայն հանդիսատես, այլև մասնակից եղաւ այն նշանաւոր տեսարաններուն ու քաղաքական դիպուածներուն, որ իր աչքին առջև

1 Տես Հա. ԺԵ, էջ 272, 317, 373։ Հա. ԺԶ, էջ 110, 141, 178, 294։ Հա. ԺԷ, էջ 39, 303։